ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ
ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

ԱՌԱՐԿԱ՝ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ
ԴԱՍԱՐԱՆ՝7
ՀԵՂԻՆԱԿ՝ ԱՆԱՀԻՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2021թ.

Գրավոր աշխատանքներ

Դաս 6, Ձևավորող գնահատում

1.Դասակարգի՛ր։

Տրված բառախմբից առանձնացրո՛ւ անձնանիշ և իրանիշ գոյականները՝ գրելով դրանք համապատասխան սյունակներում։



Անձնանիշ գոյականներ	Իրանիշ գոյականներ

2. Տարբերակի՛ր, լրացրո՛ւ։

Ծաղկաթերթերի ներսում գրի՛ր հասարակ անուններն անվանող ընդհանրական անուններ և թվարկի՛ր, օրինակ՝ *գրենական պիտույքներ՝ մատիտ, ռետին, քանոն։*



3.Գրի՛ր, բացատրի՛ր։

Անհրաժեշտ տեղում գրի՛ր մեծատառով։ Բացատրի՛ր ընդգծված բառակապակցությունների ուղղագրական կանոնները։

Խոսրով երկրորդ, <u>արևելյան ալպեր</u>, արա գեղեցիկ, <u>չինաստանի ժողովրդական հանրապետություն, ամերիկա աշխարհամաս, գեղարքունիքի մարզ,</u> ադրիատիկ

ծով, սուրբ ղազար կղզի, նոբելյան մրցանակ, միավորված ազգերի կազմակերպություն:

4.Կիրառի՛ր:

Հորինի՛ր փոքրիկ տեքստ՝ կիրառելով բաղադրյալ հատուկ անունների ուղղագրությանը պատկանող տարբեր կանոններ (50-60 բառ):

Դաս 12, Թեմատիկ աշխատանք 1

1. Տարբերակի՛ր:

Տրված տեքստից առանձնացրո՛ւ ընդգծված իրանիշ գոյականները և դասակարգի՛ր՝ ըստ իմաստային հատկանիշների ներքոբերյալ աղյուսակում:

1.Բելիզի ափին գտնվող հսկայական ստորջրյա սողանքը ունի ավելի քան 300 մետր տրամագիծ և 124 մետր խորություն: 2. Ցեխային ամպրոպները առաջանում են, երբ կայծակը խփում է հրաբխի ժամանակ: 3.Կանադական այս լճում են գտնվում մագնեզիումի, սուլֆատի, կալցիումի և նատրիումի համաշխարհային ամենամեծ պաշարները: 4. Արիստոտելն առաջին անգամ սահմանեց, որ ծառերը, թփերը, ծաղիկները կենդանի օրգանիզմներ են, որոնք ընդունակ չեն տեղաշարժվելու:

Իմաստային հատկանիշներ	Իրանիշ գոյականներ

2.Անվանի՛ր, թվարկի՛ր:

Այս ծառի ճյուղերին տո՛ւր հասարակ անուններն անվանող ընդհանրական անուններ, իսկ օրինակները թվարկի՛ր տերևների տեսքով (յուրաքանչյուրից 2 օրինակ):



3.Դասակարգի՛ր, ճի՛շտ գրիր ուղղագրական բառերը:

ա.Կարդա՛ տեքստը և ներքոբերյալ աղյուսակում դո՛ւրս գրիր անձնանիշ և իրանիշ 5-ական գոյական:

բ.Անհրաժեշտ տեղում հատուկ անունները գրի՛ր մեծատառերով:

Անակնկալի եկած զորապետ բեշիրը շուտափույթ դուրս թռավ վրանից, իսկույն ևեթ հեծավ յուր աշխետ ձին և սկսեց գոռգոռալ ու կարգի հրավիրել զորքերը: Ամպածածկ գուգարաց լեռնահովտի՝ կրակի ու սևագորշ մթության խառնուրդում չէր որոշվում՝ որոնք են հայերը, որոնք՝ հագարացիք: Թվաց՝ մի հսկա զորություն սեղմել է յուր գրկում հագարացոց բանակը: Նստած իր սևաթույր նժույգը՝ բեշիրը փորձեց փախչել յուր վրա հարձակվողներից, որոնց մեջ էր գոռ իշխանիկը, որ խիզախել էր մինչև զորապետի վրանը:

(ըստ Մուրացանի)

Անձնանիշ գոյականներ	Իրանիշ գոյականներ

4.Անվանի՛ր:

Նայի՛ր նկարներին և անուննե՛ր տուր նրանց այնպես, որ կիրառես բաղադրյալ հատուկ անունների ուղղագրական կանոնները:

1.

2.



3 . 4.

5. 6.

7. 8.

5.Կազմի՛ր, կիրառի՛ր:

Կազմի՛ր տրված գոյականների հոգնակի թիվը:
Մեկ նախադասության մեջ կիրառի՛ր տրված գոյականներից երկուսը հոգնակի թվով:

Բեռ----------
լրագիր----------
օրացույց----------
սպի----------
այունաշար----------
պատճեն----------
խմբագիր----------

6.Ստեղծի՛ր:

Երեկ անմոռանալի օր ունեցար և որոշեցիր, որ կարելի է այդ օրվա իրադարձություններն ու ապրումները գրի առնել օրագրում: Նկարագրի՛ր քո օրը, բայց հիշի՛ր, որ շարադրանքիդ մեջ պետք է կիրառես հոդերի բոլոր տեսակները (50-60 բառ):

Օրագիր

Դաս 19, Ձևավորող գնահատում 2

1. Ստուգի՛ր ինքդ քեզ։

Գրի՛ր այն ամենը, ինչ սովորեցիր գոյականի հոլովների մասին։

1.----------
2.----------
3.----------
4.----------
5.----------
6.----------
7.----------

2.Գծի՛ր մտաքարտեզ։

Ստեղծի՛ր գոյականի հոլովների մտաքարտեզ, որում սեղմ և հակիրճ կամփոփես այս թեմայի շուրջ սովորած գիտելիքներդ։

3. Ձևաբանորեն վերլուծի՛ր։

Տեքստի ընդգծված գոյականները ենթարկի՛ր ձևաբանական վերլուծության՝ նշելով 5 քերականական հատկանիշ։

Օրանջիայի ձորակում ամեն գարնան մասրենիներն են ծաղկում, բացվում են վայրի վարդերը՝ դեղին, սպիտակ։ Երբ գարուն է լինում, տաքանում են Օրանջիայի քարերը և խլեզները, փորի մաշկը դեղին, պառկում են տաք քարերին, լեզուները հանում։

Այն ժամանակ, երբ շեն էր Մանասի խրճիթը, Օրանջիայի ձորակում մասրենիներ չկային, տան պատերի վրայով երկչոտ խլեզներ չէին վազվզում, վայրի վարդերի տեղ բոստանում վարունգն էր ծաղկում։

Մի բարակ արահետ Օրանջիայի ձորակը միացնում էր գյուղի հետ։ Այժմ այդ արահետն էլ չկա։

(Ա. Բակունց)

4. Կիրառի՛ր։
Դու դասընկերներիդ հետ գնացել ես ժամանակակից արվեստի պատկերասրահ. որոշել եք, որ ձեզանից յուրաքանչյուրը պատկերասրահի մեկ լուսանկար կմեկնաբանի։
Գրի՛ր այս նկարի մեկնաբանությունը, կիրառի՛ր նոր սովորած գիտելիքներդ։

Դաս 25, Թեմատիկ աշխատանք 2

1.Կազմի՛ր, տարբերի՛ր։
ա.Կազմի՛ր տրված բառերի հոլովական ձևերը։
Դարակ, խնամի, տարի, դուստր, ձյուն, մարդ, ծնունդ, երևակայություն։
Ուղղ. ----------
սեռ. ----------
տր. ----------
հայց.----------
բաց.----------
գործ.----------
ներգ.----------

բ. Վերոբերյալ շարքի ո՞ր գոյականներն են, որ չունեն ներգոյական հոլով. գրի՛ր այստեղ ----------:

գ.Ո՞ր գոյականներն են, որ պատկանում են այլաձև հոլովման. գրի՛ր այստեղ----------

դ.Ո՞ր գոյականն ունի զուգաձև հոլովում. գրի՛ր այստեղ ----------:

2. Տեղադրի՛ր, որոշի՛ր։

Փակագծերում տրված բառերը տեղադրի՛ր համապատասխան հոլովով և գրի՛ր, թե որ հոլովով գործածեցիր։

Անտառապատ **(բլուրներ)** վրա ու անդնդախոր **(ձորեր)** շրջում էր արու եղջերուն։ Եղջերուների հասարակության մեջ ընդունված չեն անուններն ու մականունները, այլապես արու եղջերուի ծնողները անմեղ **(փառասիրություն)** հավանաբար նրա անունը «Անհաղթ», «Քաջ» կամ դրա նման մի բան կդնեին, իսկ մեծանալուց հետո ծանոթ եղջերուները նրան կկոչեին «Կարծրասմբակ»…

Բլուրների վրա ու ձորերում շրջում էր Կարծրասմբակը, կարծր **(սմբակներ)** քանդում անցյալ տարվա **(խաշամ)** ու խոնավ **(գետին),** ձնհալի ջուր խմում ու ճաշակում առաջին սեզը։

Դեռ ցուրտ էր։ Ցուրտը **(լեռ)** գագաթի սպիտակ **(փափկություն**) կողմից էր գալիս ու **(եղյամ)** ծածկում Կարծրասմբակի դունչն ու կուրծքը։ Բայց օդի մեջ ինչ՝որ անիմանալի դող կար, մի քացր մրմուռ, զարմանալի մի հնք, որ նա չէր հասկանում, բայց զգում էր երակներում…

(Խ. Գյուլնազարյան)

3.Ձևաբանորեն վերլուծի՛ր։

Տեքստի ընդգծված գոյականները ենթարկի՛ր ձևաբանական վերլուծության՝ նշելով 5 քերականական հատկանիշ։

Արահետն օձապտույտ ոլորվում էր։ Ինչքան հեռանում էինք <u>գյուղից</u>, այնքան ավելի խտանում էր անտառը, հանդիպում էինք հաստաբուն <u>ծառերի</u>, որոնց <u>ճյուղերն</u> իրար էին խառնվել և կախվել արահետի վրա։ Հաճախ էինք կռանում թամբից, գրկում ձիու <u>վիզը</u>, որպեսզի կախ ընկած ճյուղերը չքերծեին մեր դեմքը, և փշերը չծակծկեին։ Լուռ էինք։ Ես մտրակի <u>ծայրով</u> զարկում էի ծառերի տերևներին, պոկում տերևները կամ թափահարում ծառի կախ ընկած ճյուղերը, և <u>գիշերվա</u> ցողը անձրևի նման թափվում էր ձիու վրա, ինձ վրա։ <u>Ընկերս</u> կամաց սուլում էր մի երգ։

(Ա. Բակունց)

4.Մեկնաբանի՛ր նկարը։

Նայի՛ր նկարին և հորինի՛ր փոքրիկ պատմություն։ Վերնագրի՛ր պատմությունդ այնպես, որ գործածես ներգոյական հոլով (50-60 բառ)։

5. Քննադատի՛ր։

Սոցիալական ցանցերում քո ընկերները քննարկում են կենդանիների նկատմամբ մարդկանց վայրագ վերաբերմունքը։
Պատկերացրո՛ւ, որ այս պահին Ֆբ-ում գրառում ես անում։ Գրի՛ր քո կարծիքը 2-3 նախադասությամբ։ Միտքդ շարադրի՛ր գրագետ և համակարգված։